Հաստատված է
Պետության և իրավունքի
տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի 31.08.2020թ.
նիստում (արձ. թիվ 1)
Ամբիոնի պետ՝
..............................
(ստորագրություն)
..................................
(ամիս ամսաթիվ)

# ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
# ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
**(Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա)**

| | |
|---|---|
| ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ | Միջազգային իրավունք |
| ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ | |
| ՖԱԿՈՒԼՏԵՏ | Իրավագիտություն, առկա անվճար ուսուցում |
| ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ | Իրավագիտություն |
| ԱՄԲԻՈՆ | Պետության և իրավունքի տեսության և սահմա-նադրական իրավունքի ամբիոն<br>E-mail: pitambion@mail.ru |
| ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ | Գ. Առաքելյան, rmarandyan@mail.ru, հեռ. 055 56 67 23 |
| ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ | 2-րդ կուրս, 2-րդ կիսամյակ |
| ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ | Բակալավր |
| ԿՐԵԴԻՏՆԵՐ | 2 (երկու) |

| | |
|---|---|
| ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ | «Միջազգային իրավունք» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 60 ժամ, որից 18 ժամ |

| | |
|---|---|
| | դասախոսություն, 18 ժամ սեմինար պարապմունք, 24 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը գրականություն է ընթերցում և մշակում, իրականացնում է վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, ինչպես նաև՝ պատրաստվել հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը 2 ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում՝ստուգարքով: |
| ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ | Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն», «Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք» դասընթացների հենքի վրա: |
| ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ | «Միջազգային իրավունք» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են միջազգային իրավունքի հասկացությունը, առարկան, խնդիրները, սկզբունքները, միջազգային իրավունքի աղբյուրները, միջազգային կազմակերպությունները, միջազգային իրավունքի բնագավառները: |
| ՆՊԱՏԱԿ | Դասընթացի նպատակն է ուսանողներին մատուցել համապարփակ գիտելիքներ, մասնավորապես՝<br>1.Միջազգային իրավունքի ձևավորման պատմական գործընթացը,<br>2.Միջազգային իրավունքի ուսումնասիրության բնագավառները,<br>3. Միջազգային իրավունքի դերը խաղաղության և միջազգային անվտանգության պահպանության բնագավառներում,<br>4.Միջազգային իրավունքի գործոնը ժողովուրդների և |

| | |
|---|---|
| | ազգերի ինքնորոշման խնդրում,<br>5.Միջազգային իրավունքի ժամանակակից հիմնախնդիրները: |
| ԽՆԴԻՐՆԵՐ | Դասընթացի խնդիրներն են՝<br>1. Ներկայացնել միջազգային իրավունքի հասկացությունը, առարկան, համակարգը և խնդիրները,<br>2. Ուսումնասիրել միջազգային իրավունքի սկզբունքները,<br>3. Ուսումնասիրել ունիվերսալ և տարածաշրջանային կազմակերպությունների իրավունքները,<br>4. Ուսումնասիրել միջազգային քրեական իրավունքը,<br>5. Ուսումնասիրել միջազգային մարդասիրական իրավունքը,<br>6. Ուսումնասիրել միջազգային դիվանագիտական և հյուպատոսական իրավունքը,<br>7. Ուսումնասիրել Ինտերպոլ և Եվրոպոլ կառույցների ձևավորման անհրաժեշտությունը: |
| ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ<br>1.Կարողանա՝ | 1)Ներկայացնել միջազգային և միջպետական հարաբերություններում միջազգային իրավունքի դերը,<br>2) Լուսաբանել միջազգային միջկառավարական կազմակերպություններին ՀՀ անդամակցության նշանակությունը<br>3) Ներկայացնել տարածաշրջանային միջազգային կառույցների հետ ՀՀ հարաբերությունները,<br>4) Ընկալել միջազգային իրավունքի գլոբալ կարևորությունը և նշանակությունը,<br>5) Քննարկումներ և բանավեճեր անցկացնել միջազգային իրավունքի |

| | |
|---|---|
| ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | աղբյուրների և սկզբունքների, ինչպես նաև՝ դրանց միջև առաջացող հակադրությունների շուրջ,<br>6) Վերլուծել և վեր հանել այն խնդիրները, որոնք գոյություն ունեն ժամանակակից միջազգային իրավունքում,<br>7) Անդրադառնալ ՀՀ դերակատարության տարածաշրջանային մարտահրավերների դեմ պայքարում՝ հիմք ընդունելով միջազգային իրավունքի նորմերը,<br>8)Տիրապետել միջազգային իրավունքի նորմերի մեկնաբանության մեթոդաբանությանը,<br>9) Տիրապետել միջազգային իրավունքի նորմերի կիրառման մեխանիզմներին,<br>10) Մեկնաբանել ՀՀ Սահմանադրության և միջազգային իրավունքի միջև օրգանական կապը: |
| Հիմնական | 1.Филимонова М.В. Источники современного международного права- М., 2011,<br>2.ЛукашукИ.И.Функционирование международного права- М., 2007,<br>3.Бекяшев К.А.Международное публичное право- М., 2010,<br>4.Левин Д.Б. Международное право и дипломатия- М., 2002,<br>5.Basic Facts about the United Nations N.Y.2004,<br>6.Шармазанашвили Г.В. Международные меж-правительственные организации. - М.2014,<br>7.Шибаева Е.А. Право международных организаций- М.,2012,<br>8. Блищенко И.П. Дипломатическое право-М., 2012,<br>9.Молодцов С.В. Международное морское право-М., 1997: |
| Լրացուցիչ | 1.Словарь международного права.-М.2012,<br>2.Действующее международное право. Документы в 2-х томах.-М.2006,<br>3.Богуславский М.М. Международное экономическое право -М., 2011,<br>4.Международное морское право: Справочник -М, 2001,<br>5.Фердросс А. Международное право- М., 2014: |

| | |
|---|---|
| ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ | Ստուգարք («Ստուգված», «Չստուգված»): |
| ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ/ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ | Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (գերազանց) առաջադիմություն:<br>Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:<br>Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝<br>ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խորը և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով,<br>բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրա-պետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների,<br>գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները,<br>դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները: |

| | |
|---|---|
| ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին: |
| Ներկայություն<br><br>Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ<br><br>Ինքնուրույն և գործնական աշխատանքներ | Սովորողի՝ դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննար-կումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլ և՝ մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը: Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:<br><br>Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի: |

## ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

| **Թեմա 1**<br><br>**Միջազգային իրավունքի ձևավորման գործընթացը և հիմնարար սկզբունքները**<br><br>**(2ժամ դասախոսություն, 2ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |

| | |
|---|---|
| 1.Միջազգային իրավունքի ձևավորման պատմական փուլերը:<br><br>2.Միջազգային իրավունքի ժամանակակից խնդիրները:<br><br>3.Միջազգային իրավունքի 10 հիմնարար սկզբունքները: | Հարցեր 1-3-անցկացվում է դասախոսություն՝ուսանողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա:<br><br>Հարց 3-ինքնուրույն աշխատանք.ուսանողները ծանոթանում են խնդրին վերաբերող գրականությանը, քննարկում են խնդրահարույց հարցերը:<br><br>Հարցեր 1-3-սեմինար պարապմունք,որի ընթացքում սովորողները ներկայացնում են նշված հարցերի կապակցությամբ իրենց գիտելիքները,ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում է սովորողների հարցում և ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում: |

**Թեմա 2**

**Միջազգային կազմակերպությունների իրավունք**

**(2ժամ դասախոսություն,2ժամ սեմինար)**

| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
|---|---|

| | |
|---|---|
| 1.Միջազգային ունիվերսալ միջկառավարական կազմակեր-պություններ:<br><br>2.Միջազգային տարածաշրջանային միջկառավարական կազ-մակերպություններ:<br><br>3.ՄԱԿ-ը և ՄԱԿ-ի ղեկավար մարմինները: | Հարցեր 1-3-անցկացվում է դասա-խոսություն՝խմբային քննարկման եղանակով:<br><br>Հարց 2-ինքնուրույն աշխատանք.ուսանողները ծանոթանում են խնդրին վերաբերող գրականությանը, քննարկում են խնդրահարույց հարցերը:<br><br>Հարցեր 1-3-սեմինար պարապմունք,որի ընթացքում սովորողները ներկայացնում են նշված հարցերի կապակցությամբ իրենց գիտե-լիքները,ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում է սովորողների հարցում և ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում: |

| **Թեմա 3**<br>**Եվրոպայի խորհուրդը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ**<br>**(2ժամ դասախոսություն,2ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |

| | |
|---|---|
| 1.ԵԽ ստեղծման նախադրյալները:<br><br>2.ԵԽ ղեկավար մարմինները:<br><br>3.ՀՀ անդամակցությունը ԵԽ-ին:<br><br>4.Մարդու իրավունքների եվրոպական դատարան: | Հարցեր 1-4-անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով:<br><br>Հարց 4-ինքնուրույն աշխատանք.ուսանողները ծանոթանում են խնդրին վերաբերող գրականությանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կանոնադրությանը, քննարկում են խնդրահարույց հարցերը:<br><br>Հարց 1-4-սեմինար պարապմունք, որի ընթացքում ուսանողները ներկայացնում են նշված հար-ցերի կապակցությամբ իրենց գիտելիքները,ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում է ուսանողների հարցում և ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում: |

| **Թեմա 4**<br><br>**Միջազգային տնտեսական իրավունք**<br><br>**(2ժամ դասախոսություն,2ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |

| | |
|---|---|
| 1.Միջազգային տնտեսական իրավունքի ձևավորման գործընթացը:<br><br>2.Համաշխարհային բանկի գործառույթները:<br><br>3.Արժույթի միջազգային հիմնադրամը միջազգային: տնտեսական իրավունքում<br><br>4.ՀՀ անդամակցությունը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը: | Հարցեր 1-4-անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով:<br><br>Հարց 4-ինքնուրույն աշխատանք.ուսանողները ծանոթանում են խնդրին վերաբերող գրականությանը, Առևտրի համաշխարհային կազմակերպությանը ՀՀ անդամակցության հիմնախնդիրներին, քննարկում են խնդրահարույց հարցերը:<br><br>Հարցեր 1-4-սեմինար պարապմունք,որի ընթացքում սովորողները ներկայացնում են նշված հարցերի կապակցությամբ իրենց գիտե-լիքները,ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում է սովորողների հարցում և ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում: |

| **Թեմա 5**<br><br>**Միջազգային պայմանագրերի իրավունք**<br><br>**(2ժամ դասախոսություն,2ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |

| | |
|---|---|
| 1. Միջազգային պայմանագրերի դերը միջազգային իրավունքում:<br><br>2. Միջազգային պայմանագրերի նախապատրաստման, ստորագրման և վավերացման փուլերը: Միջազգային պայմանագրերի լեզուն:<br><br>3. Բաց միջազգային պայմանագրեր:<br><br>4. Փակ միջազգային պայմանագրեր:<br><br>5. «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքը: | Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով:<br><br>Հարցեր 2-ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են խնդրին վերաբերող գրականությանը, միջազգային պայմանագրերի նախապատրաստման, ստորագրման և վավերացման փուլերին, միջազգային պայմանագրերի լեզվին առնչվող հիմնախնդիրներին, քննարկում են խնդրահարույց հարցերը:<br><br>Հարցեր 1-5 – սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են նշված հարցերի կապակցությամբ իրենց գիտելիքները, ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում է սովորողների հարցում և ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում: |

| **Թեմա 6**<br>**Միջազգային մարդասիրական իրավունք**<br>**(2ժամ դասախոսություն, 2ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |

| | |
|---|---|
| 1. Միջազգային մարդասիրական իրավունքի հասկացությունը և ձևավորման գործընթացը:<br><br>2. Միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքները և աղբյուրները:<br><br>3. 1949թ. Ժնևի 4 կոնֆերանսները և դրանց կարևորությունը:<br><br>4. Ներքին և միջազգային զինված ընդհարումներ:<br><br>5. Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ստեղծման անհրաժեշտությունը: | Հարցեր 1-5-անցկացվում է դասախոսություն` ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br><br>Հարց 2-ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են խնդրին վերաբերող գրականությանը, միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքներին և աղբյուրներին, քննարկում են խնդրահարույց հարցերը:<br><br>Հարցեր 1-5-սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են նշված հարցերի կապակցությամբ իրենց գիտե-լիքները, ինքնուրույն աշխատանքի արդյունքները` առանձնակի ուշադրություն դարձնելով Ժնևի 1949թ. 4 կոնվենցիաներին:: Կատարվում է սովորողների հարցում և ինքնուրույն աշխատանքի արդ-յունքների խմբային քննարկում: |

**Թեմա 7**

**Միջազգային քրեական իրավունք**

**(2ժամ դասախոսություն, 2ժամ սեմինար)**

| Թեմայի հարցերը | Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն |
|---|---|
| 1. Միջազգային քրեական իրավունքի կայացման անհրաժեշտությունը:<br><br>2. «Հռոմի ստատուտ»-ը` որպես միջազգային քրեական իրավունքի հիմնարար փաստաթուղթ:<br><br>3. Միջազգային քրեական դատարանի գործառույթների շրջանակը:<br><br>4. Ad hoc միջազգային քրեական դատարանների ստեղծման իրավական հիմնախնդիրները:<br><br>5. Միջազգային քրեական դատարանի կառուցվածքը և գործառույթները: | Հարցեր 1-5-անցկացվում է դասախոսություն` առանձնակի ուշադրություն դարձնելով միջազգային քրեական իրավունքի նորմերի իրավակա-նոնակարգման առանձնահատկություններին:<br><br>Հարց 4-ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են խնդրին վերաբերող գրականությանը, ad hoc միջազգային քրեական դատա-րանների ստեղծման իրավական հիմնախնդիրներին, քննարկում են խնդրահարույց հարցերը:<br><br>Հարցեր 1-5-սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են նշված հարցերի կապակցությամբ իրենց գիտե-լիքները, ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում է սովորողների հարցում և ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում: |

**Թեմա 8**

**Միջազգային դիվանագիտական և հյուպատոսական իրավունք**

**(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**

| Թեմայի հարցերը | Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն |
|---|---|
| 1. Դիվանագիտական և հյուպատոսական իրավունքի հասկացությունը:<br><br>2. 1961 թ. Դիվանագիտական իրավունքի կոնվենցիան և նրա գործառույթների շրջանակը:<br><br>3. 1963 թ. Հյուպատոսական իրավունքի կոնվենցիան և գործառույթները:<br><br>4. «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքը:<br><br>5. «Հյուպատոսական հիմնարկների մասին» ՀՀ հիմնարար փաստաթուղթը: | Հարցեր 1-5-անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով ներառված հարցերի առանձնահատկությունների վրա:<br><br>Հարցեր 2-3-ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են խնդրին վերաբերող գրականությանը, 1961 թ. Դիվանագիտական իրավունքի և 1963 թ. Հյուպատոսական իրավունքի կոնվենցիաների առանցքային դրույթներին, քննարկում են ոլորտի խնդրահարույց հարցերը:<br><br>Հարց 1-5 սեմինար պարապմունք. որի ընթացքում սովորողները ներկայացնում են նշված հար-ցերի կապակցությամբ իրենց գիտելիքները, ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում է սովորողների հարցում և ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում: |

**Թեմա 9**

**Ինտերպոլ և Եվրոպոլ կառույցների ձևավորման անհրաժեշտությունը**

**(2ժամ դասախոսություն,2ժամ սեմինար պարապմունք)**

| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
|---|---|
| 1.Ինտերպոլը որպես ունիվերսալ միջազգային իրավական կազմակերպություն:<br><br>2.Եվրոպոլը և նրա գործառույթների շրջանակը:<br><br>3.Ինտերպոլ և Եվրոպոլ կառույցների ղեկավար մարմինների ձևավորման գործընթացը:<br><br>4.ՀՀ համագործակցությունը Ինտերպոլի հետ: | Հարցեր 1-4-անցկացվում Է դասախոսություն`խմբային քննարկման եղանակով:<br><br>Հարց 4-ինքնուրույն աշխատանք.ուսանողները ուսումնասիրում են լրացուցիչ նյութեր` բացա-հայտելու համար Ինտերպոլի հետՀՀ համագործակցության առանձնահատկությունները, քննարկում են ոլորտի խնդրա-հարույց հարցերը:<br><br>Հարցեր 1-4-սեմինար պարապմունք.որի ընթացքում սովորողները ներկայացնում են նշված հարցերի կապակցությամբ իրենց գիտե-լիքները,ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում Է սովորողների հարցում և ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում: |

## Հարցաշար

## «Միջազգային իրավունք» դասընթացի ստուգարքի

1. Միջազգային իրավունքի ձևավորման պատմական փուլերը
2. Միջազգային իրավունքի ժամանակակից խնդիրները
3. Միջազգային իրավունքի 10 հիմնարար սկզբունքները
4. Միջազգային ունիվերսալ միջկառավարական կազմակերպություններ
5. Միջազգային տարածաշրջանային միջկառավարական կազմակերպություններ
6. ՄԱԿ-ը և ՄԱԿ-ի ղեկավար մարմինները
7. ԵԽ ստեղծման նախադրյալները
8. ԵԽ ղեկավար մարմինները
9. ՀՀ անդամակցությունը ԵԽ-ին
10. Մարդու իրավունքների եվրոպական դատարան
11. Միջազգային տնտեսական իրավունքի ձևավորման գործընթացը
12. Համաշխարհային բանկի գործառույթները
13. Արժույթի միջազգային հիմնադրամը միջազգային : տնտեսական իրավունքում
14. ՀՀ անդամակցությունը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը

15. Միջազգային պայմանագրերի դերը միջազգային իրավունքում

16. Միջազգային պայմանագրերի նախապատրաստման, ստորագրման և վավերացման փուլերը: Միջազգային պայմանագրերի լեզուն

17. Բաց միջազգային պայմանագրեր

18. Փակ միջազգային պայմանագրեր

19. «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքը

20. Միջազգային մարդասիրական իրավունքի հասկացությունը և ձևավորման գործընթացը

21. Միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքները և աղբյուրները

22. 1949թ. Ժնևի 4 կոնֆերանսները և դրանց կարևորությունը

23. Ներքին և միջազգային զինված ընդհարումներ

24. Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ստեղծման անհրաժեշտությունը

25. Միջազգային քրեական իրավունքի կայացման անհրաժեշտությունը

26. «Հռոմի ստատուտ»-ը՝ որպես միջազգային քրեական իրավունքի հիմնարար փաստաթուղթ

27. Միջազգային քրեական դատարանի գործառույթների շրջանակը

28. Ad hoc միջազգային քրեական դատարանների ստեղծման իրավական հիմնախնդիրները

29. Միջազգային քրեական դատարանի կառուցվածքը և գործառույթները

30. Դիվանագիտական և հյուպատոսական իրավունքի հասկացությունը

31. 1961թ. Դիվանագիտական իրավունքի կոնվենցիան և նրա գործառույթների շրջանակը

32. 1963թ. Հյուպատոսական իրավունքի կոնվենցիան և գործառույթները

33. «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքը

34. «Հյուպատոսական հիմնարկների մասին» ՀՀ հիմնարար փաստաթուղթը

35. Ինտերպոլը որպես ունիվերսալ միջազգային իրավական կազմակերպություն

36. Եվրոպոլը և նրա գործառույթների շրջանակը

37. Ինտերպոլ և Եվրոպոլ կառույցների ղեկավար մարմինների ձևավորման գործընթացը

38. ՀՀ համագործակցությունը Ինտերպոլի հետ